ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 2, 1952 Общественные науки

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 1951 ԹՎԱԿԱՆԻՆ

Մեր ռեսպուբլիկան 1951 թվականի ընթացքում ձեռք բերեց նոր, զգալի հաջողություններ՝ ժողովրդական տնտեսության, կուլտուրայի և գիտության բոլոր բնագավառներում։

Գիտության հետագա զարգացման գործում մեծ դեր կատարեց ընկեր Ստալինի «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» աշխատությունը, որը հանդիսանում է մարքսիզմի ստեղծագործական զարգացման փայլուն օրինակ։ Այդ կլասիկ աշխատության պարունակած դրույթները և ցուցումները դոգմատիզմի և թալմուդիզմի դեմ անխնա պայքար ծավալելու, ստեղծագործական դիսկուսիաներ կազմակերպելու և գիտական կարծիքների ազատ պայքարը ուժեղացնելու մասին, ուղենիշ հանդիսացան սովետական գիտության հետագա վերելքի համար։

Ղեկավարվելով ընկեր Ստալինի պատմական ցուցումներով և անշեղորեն կենսագործելով իդեոլոգիական հարցերի մասին Համկ(բ)Պ Կենտկոմի ու ՀԿ(բ)Պ Կենտկոմի որոշումները, ինչպես նաև ՀԿ(բ)Պ Կենտկոմի որոշումները՝ Հասարակական գիտությունների բաժանմունքի առանձին ինստիտուտների ու սեկտորների մասին, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Հասարակական գիտությունների բաժանմունքի գիտա-հետազոտական հիմնարկները 1951 թվականի ընթացքում հասան որոշ դրական արդյունքների։

Գիտա-հետազոտական աշխատանքը բարելավելու մարտական ծրագիր հանդիսացան Հայաստանի կոմունիստական (բոլշևիկների) պարտիայի 15-րդ համագումարի որոշումները։

Նշելով այն հաջողությունները, որ ձեռք են բերված հասարակական գիտությունների բնագավառում, 15-րդ համագումարը միաժամանակ ցույց տվեց այն լուրջ թերությունները, որոնք գոյություն ունեն այդ գիտությունների բնագավառում։ Դրա հետ մեկտեղ համագումարը կոնկրետ ուղիներ նշեց՝ եղած խոշոր թերությունները վերացնելու համար։

Հասարակական գիտությունների բաժանմունքը և նրա կազմի մեջ մտնող ինստիտուտներն ու սեկտորները համագումարի որոշումներից ելնելով՝ վերակառուցեցին իրենց աշխատանքը, վերանայեցին ու ճշտեցին թեմատիկ պլանները, հատուկ ուշադրություն դարձնելով պատմության, գրականության, լեզվի, փիլիսոփայության ու արվեստի նոր և նորագույն շրջանների, մասնավորապես սովետական շրջանի ակտուալ հարցերի ուսումնասիրության։

Պատմության ինստիտուտը 1951 թվականին հրատարակեց «Հայ ժողովրդի պատմության» Ա. հատորը և ավարտեց այդ գրքի Բ. հատորը կազմելու հետ կապված աշխատանքները, հրատարակեց «Ցարիզմի ագրարային քաղաքականությունը և գյուղացիական շարժումները Հայաստանում 19-րդ դարի սկզբում» արխիվային փաստաթղթերի ժողովածուն։ Ինստիտուտը

ավարտեց «Սովետական Հայաստանի պատմության ուրվագծեր» կոլեկտիվ մեծ աշխատությունը, հրատարակության հանձնեց ռուս-հայկական հարաբերությունները 17-րդ դարում արխիվային փաստաթղթերի ժողովածուն և ընկ. Գ. Միքայելյանի «Կիլիկիայի հայկական թագավորության պատմությունը», հրատարակության պատրաստեց Հ. Էլչիբեկյանի՝ «Պայքարը Հայաստանում սովետական կարգերի հաստատման համար» մոնոգրաֆիկ աշխատությունը։ Ինստիտուտը շարունակում է հայ ժողովրդի պատմության սկզբնաղբյուրների հրատարակման գործը։

Գրականության ինստիտուտը վերահրատարակեց լեզվի մասին ընկեր Ստալինի ուսմունքի լույսով վերամշակված «Հայ գրականության պատմության» դասագրքի 1-ին և 2-րդ հատորները, հրատարակեց ընկ. Դ. Հովհաննի «Մ. Գորկին և հայ կուլտուրան» աշխատությունը, Գ. Սունդուկյանի երկերի լրիվ ժողովածուի 1-ին և 2-րդ հատորները, Հ. Թումանյանի երկերի ժողովածուի 4-րդ հատորը, Ա. Ղանալանյանի «Հայկական առածանին» աշխատությունը և այլն։

Լեզվի ինստիտուտը հրատարակեց Գ. Ղափանցյանի «Լեզուների ծագումնաբանական դասակարգման հիմունքները և լեզվի զարգացման ստադիալականության մասին Ն. Մառի հայացքների քննադատությունը» աշխատությունը, լույս ընծայեց գիտական աշխատությունների մի ժողովածու՝ նվիրված ընկեր Ստալինի «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» հանճարեղ աշխատության տարեդարձին։ Ինստիտուտը շարունակեց աշխատանքը քառահատոր «Ռուս-հայերեն մեծ բառարան»-ը կազմելու և տպագրության պատրաստելու ուղղությամբ։ 1951 թվականի ընթացքում ավարտվեցին մի շարք մոնոգրաֆիկ ուսումնասիրություններ («Ռուսաց լեզվի դերը հայերենի զարգացման գործում», «Արտիալի բարբառը», «Կարնո բարբառը» և այլն)։

Անցյալ տարիների համեմատ ավելի արդյունավետ աշխատեցին Փիլիսոփայության, Տնտեսագիտության և Արվեստների պատմության ու տեսության սեկտորները և Պետական պատմական թանգարանը։

Փիլիսոփայության սեկտորը աշխատեց երկու հիմնական պրոբլեմների՝ հայ ժողովրդի փիլիսոփայության պատմության և դիալեկտիկական ու պատմական մատերիալիզմի զարգացման լենինյան-ստալինյան էտապի մի շարք թեմաների ուղղությամբ։ 1951 թվականի ընթացքում սեկտորում ավարտվեց «Ժողովրդական մասսաների ստեղծագործական ակտիվության դերը ՍՍՌՄ-ում սոցիալիզմի կառուցման և սոցիալիզմից աստիճանաբար կոմունիզմին անցնելու գործում» մոնոգրաֆիկ ուսումնասիրությունը և 14-րդ դարի հայ փիլիսոփա Հովհան Որոտնեցու աշխատությունների թարգմանությունը՝ հրատարակման համար։

Տնտեսագիտության սեկտորը անցյալ տարվա ընթացքում կատարեց մի շարք կարևոր աշխատանքներ։ Դրանցից կարելի է հիշատակել արդեն ավարտված և կառավարությանը ներկայացված այն աշխատությունները, որոնք վերաբերում են տեղական արդյունաբերական հումքի օգտագործման հարցերին, արտադրության նոր ճյուղերի կազմակերպմանը, մեր ռեսպուբլիկայում երկաթուղային տրանսպորտի շինարարության հեռանկարներին և այլն։

Արվեստների պատմության ու տեսության սեկտորը 1951 թվականին

պատրաստում էր «Հայ երաժշտական կուլտուրայի պատմության ուրվագծերի» 3-րդ հատորը և «Հայ ճարտարապետության պատմության ուրվագծեր»-ի 1-ին հատորը։ Սեկտորը շարունակել է հայ ժողովրդական և գուսանական երգերի հավաքումն ու գրանցումը։ Միաժամանակ նա ավարտել է Կոմիտասի «Երկերի ժողովածու»-ի գիտական հրատարակության 1-ին հատորի պատրաստման աշխատանքները։

Պետական պատմական թանգարանը աշխատել է Հայաստանի պատմությանն ու կուլտուրային նվիրված մշտական ցուցահանդեսի լայնացման ուղղությամբ և շարունակել է մեր ռեսպուբլիկայի հնագիտական ուսումնասիրությունը, մասնավորապես միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Դվինի պեղումները։

Կատարելով Հայաստանի կոմունիստական (բոլշևիկների) պարտիայի 15-րդ համագումարի որոշումները, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Հասարակական գիտությունների բաժանմունքի ինստիտուտներն ու սեկտորները զգալի աշխատանք՝ ծավալեցին գիտական դիսկուսիաների, գիտական սեսիաների, կոնֆերանսների ու խորհրդակցությունների կազմակերպման ուղղությամբ։ Այդ դիսկուսիաներում, սեսիաներում և խորհրդակցություններում, Երևան քաղաքի հասարակայնության լայն մասնակցությամբ, քննարկվեցին այնպիսի կարևոր հարցեր, ինչպես բազիսի ու վերնաշենքի հարցերը, հայ ժողովրդի էթնոգենեզի ու ձևավորման խնդիրները, հայ ժողովրդի պատմության պերիոդիզացիայի հարցերը, գրականության վերնաշենքային բնույթի հարցը, գրական ժառանգության օգտագործման հարցը, ժամանակակից հայերենի մաքրության հարցը։ 1951 թվականին տեղի ունեցավ Գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովը՝ նվիրված ընկեր Ստալինի «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» աշխատության լույս ընծայման տարեդարձին, ինչպես նաև Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ու Հայկական ՍՍՌ Լուսավորության մինիստրության համատեղ գիտական սեսիան, նվիրված լեզվաբանության վերաբերյալ ընկեր Ստալինի հանճարեղ աշխատություններին և դպրոցներում լեզուների դասավանդման հարցերին։

Լեզվի մասին ընկեր Ստալինի ուսմունքի հետագա մասսայականացման նպատակով Հասարակական գիտությունների բաժանմունքի հիմնարկների գիտական աշխատողները 1951 թվականի ընթացքում մի շարք զեկուցումներ ու դասախոսություններ են կարդացել ինչպես Երևանում, այնպես էլ ռեսպուբլիկայի տարբեր շրջաններում։

Ամփոփելով Հասարակական գիտությունների բաժանմունքի ինստիտուտների, սեկտորների 1951 թ. աշխատանքների արդյունքները, անհրաժեշտ է, սակայն, ընդգծել, որ այդ հիմնարկների գրական-հետազոտական գործունեության մեջ դեռևս գոյություն ունեն լուրջ թերություններ։ Հասարակական գիտությունների բաժանմունքի ինստիտուտներն ու սեկտորները հետ են մնում կյանքի պահանջներից։

Դեռևս լիովին չի կատարված Հայաստանի կոմունիստական (բոլշևիկների) պարտիայի 15-րդ համագումարի պահանջը՝ հասարակական գիտությունների հիմնարկների աշխատանքների արմատական բարելավման մասին։ Գիտության այս բնագավառում դեռևս շարունակում են մնալ այն

խոշոր թերություններից շատերը, որոնք մատնացույց էին արված 15-րդ համագումարի կողմից։

Այդ թերություններից պետք է հիշատակել այն փաստը, որ Հասարակական գիտությունների բաժանմունքի գիտա-հետազոտական հիմնարկները դեռևս չեն տվել կամ բավարար քանակությամբ չեն տվել պատմության, գրականության, լեզվի, արվեստի, փիլիսոփայության և անտեսագիտության ակտուալ հարցերին նվիրված, իդեալիս բարձրարժեք մոնոգրաֆիկ տպագիր լուրջ աշխատություններ։

Որոշ հիմնարկներ վատ են կատարում հրատարակչական պլանները։ Ինստիտուտների և սեկտորների տպագիր արտադրանքը դեռևս անբավարար է։ Հաճախ հրատարակչական պլանի կատարումը ըստ մամուլների թվի ձեռք է բերվում համեմատաբար ավելի քիչ ակտուալ աշխատությունների հրատարակման հաշվին։

Այսպես, օրինակ, Պատմության ինստիտուտը չի հրատարակել ոչ մի խոշոր մոնոգրաֆիկ աշխատություն, որը նվիրված լիներ հայ ժողովրդի պատմության նոր ու նորագույն շրջանի և մասնավորապես սովետական շրջանի պատմությանը, ինչպես նաև հայ-ռուսական հարաբերությունների պատմությանը։

Գրականության ինստիտուտը դեռևս չի հրատարակել որևէ խոշոր աշխատանք, նվիրված հայ գրականության նոր և նորագույն շրջանին։

Այդ հարցերին նվիրված մի շարք աշխատանքներ, որոնք արդեն մի քանի տարի է, ինչ պատրաստվում են, օրինակ՝ «Հայ գրականության պատմություն» դասագրքի 3-րդ հատորը և հայ գրականության պատմության վեց հատորյակի 6-րդ հատորը (որ նվիրված է սովետական շրջանին), մինչև օրս դեռ չեն հրատարակված։

Շատ դանդաղ են ընթանում ռուս-հայերեն ակադեմիական մեծ բառարանի 1-ին հատորի պատրաստման աշխատանքները Լեզվի ինստիտուտում։ Այդ ինստիտուտը դեռևս չի տվել ոչ մի խոշոր տեսական աշխատություն, որտեղ լեզվի մասին ստալինյան ուսմունքի հիման վրա ուսումնասիրվեր հայոց լեզվի հիմնական բառային ֆոնդը, հայոց լեզվի գիտական քերականությունը, ինչպես նաև քննադատության ենթարկվեին Մառի «ուսմունքի» կողմնակիցների անցյալում հրատարակած դասագրքերն ու հայոց լեզվին նվիրված այլ աշխատությունները։

Տպագիր մոնոգրաֆիկ աշխատություններ չեն տվել նաև Փիլիսոփայության, Տնտեսագիտության և Արվեստների պատմության տեսության սեկտորները։

Պետք է նշել, որ Արվեստների պատմության ու տեսության սեկտորը շարունակում է հետ մնալ և դեռևս չի հրատարակել ոչ մի խոշոր աշխատություն, նվիրված սովետական կերպարվեստի, ճարտարապետության և թատրոնի հարցերին։

Հասարակական գիտությունների բաժանմունքի գիտա-հետազոտական հիմնարկների 1951 թ. աշխատանքների մյուս լուրջ թերությունն այն է, որ բացակայել է անհրաժեշտ պատասխանատվությունը՝ թեմատիկ պլանները ժամանակին և լրիվ կատարելու հարցում։ Այդ հիմնարկների առանձին ղեկավարներ և գիտական աշխատողներ դեռևս լիովին չեն ըմբռնել

պլանավորման նշանակությունն ու կարևորությունը գիտական աշխատանքի ընդգծումում, պեռևս չեն հասկացել, որ վերջապես օրգանների կողմից հաստատված թեմատիկ և հրատարակչական պլանները պարտադիր են և օրենքի ուժ ունեն նիշտ այնպես, ինչպես ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառներում ընդունված պլանները։

Միմիայն դրանով կարելի է բացատրել այն փաստը, որ Հասարակական գիտությունների բաժանմունքի մեջ մտնող մի շարք ինստիտուտներում և սեկտորներում ժամանակին չեն ավարտված և կամ լրիվ չեն կատարված թեմատիկ պլանները։ Դա հետևանք է նաև այն սխալ պրակտիկայի, երբ տարվա ընթացքում ինքնագլուխ կերպով փոփոխություններ են մտցվում հաստատված պլանների մեջ։ Իսկական է միայն հիշել, որ գրականության ինստիտուտում թեմատիկ պլանով նախատեսված 31 թեմաներից 8-ը կամ բոլորովին չեն կատարված կամ կատարված են միայն մասամբ։ Չկատարվածների թվում են այնպիսի կարևոր թեմաներ, ինչպես «Հետազոտության շրջանի սովետական գրականությունը», «Նախահոկտեմբերյան հայկական մարքսիստական գրականությունը»։

Լեզվի ինստիտուտում թեմատիկ պլանի 14 թեմաներից չեն կատարված 4-ը, այդ թվում «Ժամանակակից հայերենի ձևավորման նախնական շրջանը» թեման (կատարող՝ պրոֆ. Գ. Սևակ)։

Արվեստների պատմության ու տեսության սեկտորում ևս չի կատարված 4 թեմա, որոնց թվում՝ «Հայկական երաժշտական կուլտուրայի ուրվագծեր» թեմայի մի շարք մասերը (կատարողներ՝ պրոֆ. Գ. Տիգրանով և ուրիշները)։

Թեմատիկ պլանները լրիվ չեն կատարված նաև Պատմության ինստիտուտում։ Փաստորեն ձախողված է «Հայաստանը 14—15-րդ դարերում» թեմայի կատարումը։ Խիստ ձգձգվում է «Ֆեոդալական հարաբերությունների ծագումը Հայաստանում» թեմայի ավարտումը և այլն։

Հասարակական գիտությունների բաժանմունքի գիտա-հետազոտական հիմնարկների աշխատանքի մյուս լուրջ թերությունն այն է, որ ինստիտուտների ու սեկտորների գիտական խորհուրդները և խմբագրական-հրատարակչական խորհուրդները գեռևս անբավարար չափով են զբաղվում գրվող գիտական աշխատությունների սիստեմատիկ քննարկմամբ։ Աշխատությունների զգալի մասը չի ենթարկվում բոլշևիկյան գործարար քննադատության և ինքնաքննադատության։ Տպագրության պատրաստվող աշխատությունները գրախոսողներից շատերը, ըստ երևույթին չցանկանալով վատացնել իրենց «ընկերական» հարաբերությունները գրանց հեղինակների հետ, հաճախ իրենց գրախոսություններում չեն նշում այդ գործերում տեղ գտած գաղափարական և փաստական լուրջ թերությունները։ Հիմնականում դրանով է բացատրվում, որ մի շարք աշխատություններ համարվում են ավարտված, տարեց-տարի մտցվում են հրատարակչական պլանների մեջ, բայց փաստորեն չեն հրատարակվում, քանի որ այդ այսպես կոչված «պատրաստի աշխատանքները» կարիք ունեն զգալի լրացումների, ճշտումների և էական վերամշակման, որից հետո միայն կարելի է դրանք հրատարակել՝ իբրև լիարժեք գիտական գործեր։

Գիտական արտադրանքի որակի հարցը սերտորեն կապված է ամենից առաջ գիտական կադրերի ճիշտ ընտրության, դասավորման և դաս-

տիրակալման հարցերի հետ։ Հասարակական գիտությունների բաժանմունքի ինստիտուտներն ու սեկտորները այս տեսակետից, պժրախտաբար, բավարար չափով հետևողական չեն եղել Հայաստանի կոմունիստական (բոլշևիկների) պարտիայի 15-րդ համագումարի որոշումների կենսագործման ասպարեզում։ Հանգստանալով Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայում անցկացած ընդհանուր ատեստացիայի արդյունքներով, ինստիտուտների ու սեկտորների ղեկավարները սիստեմատիկաբար չեն զբաղվում կադրերի ստուգմամբ, ուսումնասիրությամբ, դաստիարակությամբ և ընտրությամբ, որպեսզի հնարավոր լինի ամրապնդել գիտական հիմնարկները բարձրորակ կադրերով, առաջ քաշել երիտասարդ կադրեր, ապատվել գիտական աշխատանքի անընդունակ և բարձրորակ գիտական արտադրանք չտվող մարդկանցից։ Դեռևս վերջ չի տրված իրենց չարդարացնող աշխատակիցների նկատմամբ ցույց տրվող լիբերալիզմի փտած պրակտիկային։ Ինստիտուտների ու սեկտորների ղեկավարները բոլշևիկյան անհնազանդ պահանջկոտություն ու սկզբունքայնություն երբեմն փոխարինում են անսկզբունք ընկերական հարաբերություններով։

Բնորոշ է, որ թեև 1951 թվականի պլաններից առանձին թեմաներ չեն կատարված, ինստիտուտների և սեկտորների ղեկավարները որևէ լուրջ ադմինիստրատիվ միջոց չեն ձեռնարկել այն անբարեխիղճ աշխատակիցների նկատմամբ, որոնք ձախողել են իրենց պլանային թեմաների կատարումը։ Այդ գիտական աշխատողներից ոչ մեկը, նույնիսկ առավել անբարեխիղճ մարդիկ, չեն ազատված աշխատանքից։

Պետք է նշել, որ մինչև օրս լիովին չի լուծված արվեստների պատմության ու տեսության և փիլիսոփայության սեկտորները բարձրորակ կադրերով համալրելու հարցը։

Պետք է վերջ տալ այն սխալ պրակտիկային, երբ առանձին մասնագիտությունների գծով ասպիրանտուրայի միջոցով պատրաստված երիտասարդ կադրերը դուրս են մնում նրանց կարիքը զգացող հիմնարկներից, որոնց ղեկավարները անհրաժեշտ հետևողականություն չեն ցուցաբերում՝ իրենց իսկ պատրաստած մասնագետներին իրենց հիմնարկներում տեղավորելու գործում, ինչպես այդ պատահեց անցյալ տարի փիլիսոփայության սեկտորում։

Ասպիրանտուրայի գծով եղած թերություններից մեկն էլ այն է, որ մինչև օրս անհրաժեշտ խստություն չի ցուցաբերվում թեկնածուական քննությունները հանձնող ասպիրանտների նկատմամբ, որի հետևանքով շատ հաճախ ոչ մի տարբերություն չի զգացվում ընդունելության քննությունների և թեկնածուական քննությունների միջև։ Այսպես, օրինակ, փիլիսոփայական առարկաների գծով թեկնածուական քննությունները ընդունող հանձնաժողովի նախկին կազմը խախտում էր գոյություն ունցող կարգը, երբ քննվողի գիտելիքները ըստ սկզբնաղբյուրների քննելու փոխարեն, բավարարվում էր լոկ դասագրքերով կամ օժանդակ գրականության մեջ եղած նյութերով։ Թեկնածուական քննությունն ընդունող հանձնաժողովների կողմից այդպիսի լիբերալ մոտեցում նկատվում է նաև Պատմության, Իրականության, Լեզվի ինստիտուտներում։

Հասարակական գիտությունների բաժանմունքի ինստիտուտների աշխատանքներում եղած լուրջ թերություններից մեկն էլ այն է, որ այդ ինստի-

ինստիտուտների ղեկավարները և որոշ հիմնական աշխատակիցներ, ծանրաբեռնված են վարչական և իմբրագրական զանազան գործերով։ Այդ վիճակը խիստ բացասաբար է անդրադառնում նրանց ստեղծագործական աշխատանքների վրա։ Մեծ մասամբ դրանով է բացատրվում այն փաստը, որ այնպիսի մասնագետներ, ինչպես ընկ. ընկ. Ա. Հովհաննիսյանը, Մ. Մկրյանը, Ը. Թոփչյանը և ուրիշներ, տարիների ընթացքում չեն տալիս մոնոգրաֆիկ խոշոր աշխատություններ, նվիրված պատմության, գրականության և այլ գիտությունների ակտուալ հարցերին։

Հասարակական գիտությունների բաժանմունքի մի շարք ինստիտուտների ու սեկտորների գիտա-հետազոտական գործունեության մեջ գոյություն ունեցող լուրջ թերությունները մեծ չափով հետևանք են նաև այն բանի, որ բաժանմունքի բյուրոն գործնական, օպերատիվ ղեկավարություն ցույց չի տալիս նրանց նկատմամբ։ Նա անբավարար է իրականացնում հսկողությունը բաժանմունքի կազմի մեջ մտնող հիմնարկների աշխատանքի վրա, քիչ է օգնում նրանց՝ եղած թերությունները լիկվիդացնելու գործում և անհրաժեշտ պահանջկոտություն չի ցուցաբերում ինստիտուտների ու սեկտորների ղեկավարության նկատմամբ։

Հասարակական գիտությունների բաժանմունքի, նրա կազմի մեջ մտնող հիմնարկների ղեկավարների և պարտիական կազմակերպությունների հերթական, ամենակարևոր խնդիրն է՝ մոբիլիզացնել գիտական աշխատողների ողջ կոլեկտիվի ուշադրությունը այն լուրջ թերությունների լիկվիդացման վրա, որ մատնանշված են Հայաստանի կոմունիստական (բոլշևիկների) պարտիայի 1-ին համագումարի կողմից, որպեսզի Հասարակական գիտությունների բաժանմունքը դառնա մեր ռեսպուբլիկայի Ակադեմիայի առաջատար բաժանմունքներից մեկը։

Հասարակական գիտությունների բաժանմունքի ինստիտուտները ու սեկտորները, որ հանդիսանում են իդեոլոգիական բնագավառի առաջատար գիտա-հետազոտական հիմնարկները, կարող են և պետք է տան բարձր գաղափարականությամբ օժտված տեսական այնպիսի աշխատություններ, որոնք արժանի լինեն սոցիալիզմից կոմունիզմին անցնելու-ստալինյան պարադիգմին։

Այդ աշխատությունները ստեղծագործական մարքսիզմի դիրքերից պետք է ընդհանրացնեն սոցիալիստական շինարարության փորձը, օժանդակեն մեր ժողովրդի պայքարին՝ հանուն սոցիալիզմից կոմունիզմին անցնելու պատմական գործի հաղթանակի։ Նրանք պետք է հագեցված լինեն բոլշևիկյան պարտիականության մարտական ոգով, թշնամական ամեն տեսակի «իդեանների» ու «կոնցեպցիաների» դեմ անհաշտ պայքարի ոգով։

Այդ են պահանջում մեզանից կոմունիստական պարտիան և սովետական կառավարությունը, որոնք ստեղծել են բոլոր նպաստավոր պայմանները՝ գիտական աշխատողների արդյունավետ ստեղծագործական աշխատանքի համար։